ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- փետրվարի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

«ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2021 թվականի փետրվարի 8-ի №04/11.2/655-2021 գրությամբ ներկայացված տեղեկությունն առ այն, որ հետազոտումների արդյունքում 890-902.5ՄՀց հաճախականային շերտով արձանագրվել են կողմնակի ազդանշաններ, որոնց ճառագայթման աղբյուրը գտնվում է Երևան քաղաքի Վարդանանց 96 հասցեում՝ «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) պատկանող «Լիդերիա» խանութում,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ ընկերությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 11-ի №ՍԾ/34.2-Մ2-9/406-2021 գրությունը, որին ի պատասխան ընկերությունը հայտնել է, որ բջջային կապի վերահաղորդիչ սարքը տեղադրվել է սեփական ուժերով,

գ) որ իրավասու պետական մարմնի և ընկերության կողմից ներկայացված տեղեկատվությամբ փաստվել է ընկերության կողմից առանց թույլտվության 902.5ՄՀց կենտրոնական ռադիոհաճախականության (40ՄՀց թողարկման շերտով) օգտագործումը,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը և 60-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 902.5ՄՀց կենտրոնական ռադիոհաճախականության (40ՄՀց թողարկման շերտով) օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:
2. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է.

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.
2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------2021թ.